ԻՐԱՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼ ԻՍԼԱՄ-ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի պատասխանատու Մարհի Աբադինին:

Խոսելով Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, պրն. Աբադինը կարևորեց կրոնների միջև երկխոսության հաստատումը՝ ընդդեմ աշխարհում նկատվող բարոյական սկզբունքների անկման: Մշակույթի պատասխանատուն տեղեկացրեց, որ այդ նպատակով Իրանում ստեղծված է իսլամ-քրիստոնեություն երկխոսությանն ուղղված մշակութային կազմակերպություն, որի պատվիրակությունն առաջիկայում կժամանի Հայաստան: Պրն. Աբադինը համոզմունք հայտնեց, որ Հայոց Եկեղեցին կարևոր դեր կարող է ստանձնել երկխոսության ծավալման գործում, և հույս հայտնեց, որ Երևանում վերակառուցված Կապույտ մզկիթը կարող է դառնալ նման երկխոսության հանգրվաններից մեկը:

Գարեգին Սրբազանը ողջունեց Իրանի այս նախաձեռնությունը՝ միաժամանակ կիսելով երիտասարդության շրջանում հոգևոր դաստիարակության շուրջ եղած մտահոգությունները: Սրբազան Հայրը վստահեցրեց, որ Իրանի կողմից արված առաջարկը կներկայացվի Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի ուշադրությանը՝ համոզմամբ, որ այն կարժանանա Վեհափառ Հայրապետի քաջալերանքին:

Սրբազան Հայրը միաժամանակ իր երախտագիտությունն արտահայտեց Իրանին, որն իր ընվզումի ձայնը բարձրացրեց աղրբեջանական իշխանությունների կողմից վերջերս Ջուլֆայի հայկական գերեզմանատան ոչնչացման առիթով:

Անդրադառնալով ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից նույն օրը Իրաքի դեմ սկսված ռազմական գործողություններին, Սրբազան Հայրը ցավ հայտնեց խաղաղ բնակչության շրջանում եղած զոհերի համար՝ հավաստիացնելով, որ բարի կամքը կլինի հաղթողը:

Հանդիպման ավարտին պրն. Աբադինը Գարեգին Սրբազանին հանձնեց ՄԱԿ-ում ԻԻՀ Նախագահ Մոհամադ Խաթամիի արտասանված ելույթը, որտեղ պրն. Նախագահը 2001 թ. հայտարարում է կրոնական և մշակութային երկխոսությունների տարի:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ